

Ք.Գավառ

16.01.2018թ.

« Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու, մի կողմից «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի դեմս տնօրեն՝ Բ. Հովեյանի, որը ղեկավարվում է ըստ իր կանոնադրությամբ, այսուհետ կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Սույն պայմանագրով Կատարողը Գավառի երկրագիտական թանգարանը Պատվիրատուի կողմից հատկացված «2018 թվականի պետական բյուջեի հատկացված միջոցների հաշվին տրվող /բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ՊՈԱԿ-ներին», հոդվածով/ 16591.2 հազ. «Հրամ գումարը հատկացնել սույն պահանջ կատարողին:
- 1.2 «Այլ ընթացիկ սուբսիդիաներ», հոդվածով «Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշումով «Գեղարքունիքի մարզպետարանին նախատեսված «պետական բյուջեի 08. 02. 02. 02», ծրագրով հոդվածային վերաբաշխում կատարելու մասին հավելվածի հիմքով:
- 1.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը հատկացվում է «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ կազմակերպելու համար», ըստ նպատակային օգտագործման հանձնարարականի:
- 1.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների և ծառայությունների արժեքը, ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

2 Հաշվետվությունը

- 2.1 Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ուսուցմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կատարողի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.2 Կատարողը պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին գրավոր հաշվետվությունը պատվիրատուին ներկայացնել ամբողջական կատարման ժամկետի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

- 2.3 Պատվիրատուն քննարկում է սույն պայմանագրի 2.2 կետում նշված հաշվետվությունները և այդ կապակցությամբ համապատասխան որոշում է ընդունում դրանք ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն ծառայությունը համապատասխանում են սույն պայմանագրով նախատեսված ծառայություններին, ապա դրանք ընդունվում են:
- 2.4 Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը ընդունվելու դեպքում կատարողը այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է կատարողին: Սահմանված կարգով ծանուցում չտրամադրվելու դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:
- 2.5 Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը չընդունվելու դեպքում, կատարողը պարտավորվում է անվճար՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել կատարողի կողմից արձանագրված անհամապատասխանությունները: Եթե արձանագրված անհամապատասխանությունները հնարավոր չէ վերացնել, ապա կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

3 Նվիրաբերության տրամադրման պայմանները

- 3.1 Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետի նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայն վճարման ժամանակացույցի փոխանցում է կատարողին:
- 3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը կատարողը տնօրինում է դրամաշնորհների գումարը գործող օրենքի համապատասխան:
- 3.3 Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները կատարողի կողմից պետք է կատարվեն մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը:

4 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /Ֆորս-մաժոր/

- 4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5 Այլ դրույթներ

- 5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
- 5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:
- 5.3 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:
- 5.4 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6 Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու
 ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
 Բ. Գավառ
 ՀՎՀՀ 08404767
 ՀՀ 900171078505
 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն

Կատարող
 ՀՎՀՀ 08400689
 ՀՀ 16021100052800
 ՎՏԲ բանկ Կամո մ/ճ

Ս. Խլղաթյան

Ս. Խլղաթյան

/ստորագրություն/



Բ. Հովեյան

Բ. Հովեյան

/ստորագրություն/



Կատարող

<< Գեղարքունիքի
 Երկրագիտական թանգարան >> ՊՈԱԿ
 Ք.Գավառ Զոր.Անդրնիկի 32
 հհ 16021100052800
 ՎՏԲ Հայաստան բանկ<<ԿԱՄՈ>> մ/ճ
 հվհհ ___ 08400689

Պատվիրատու

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

 Ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7
 հհ 900171078539
 Կենտրոնական գանձապետարան
 հվհհ ___ 08404767

Ա Կ Տ Ո 1

ՀԱՆՁՆՄԱՆ-ՇՆՈՒՆՄԱՆ

31 դեկտեմբերի 2017 թ.

Պայմանագրի անվանումը՝ Սուբսիդիայի հատկացման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 16__01__2017թ.

Պայմանագրի համարը՝ _____ 1 _____

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան (այսուհետ՝ Պատվիրատու)՝

սուբսիդիա տրամադրող ՀՀ պետական կառավարման մարմինը

ի դեմս ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ
 Խլղաթյանի և <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան >> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝
 Կատարող)՝

սուբսիդիա ստացող իրավաբանական անձը

ի դեմս __թանգարանի տնօրեն Բյուրեղիկ Հովեյանի
 կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը 01.01.2017 թ.

31.12.2017 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ

Համառոտ նկարագիրը	Քանակը	Նվազագույն շահավետ գինը՝ մեկ միավորի հաշվարկով (հազ. դրամ)	Մեկ միավորի գինը (հազ.դրամ)	Մեկ միավորի համար տրամադրվող սուբսիդիայի չափը (հազ.դրամ)	Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)	Վճարման վերջնաժամկետը՝ ամիս, ամսաթիվը
1	2	3	4	5=3-4	6=2x5	7
Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	1	17758,9	0,0	17758,9	17758,9	հուվարդեկտեմբեր
Ընդամենը						

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Հովեյան Բ.

ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

Պրոպան Կ.

ազգանուն, անուն

Կ.Տ.

